ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/20

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի 12.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.02.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

««Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ մրցույթ):

«ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վագա Ֆարմ» (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 29.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով արձանագրել է հետևյալը. «ՎագաՖարմ» ՍՊԸ-ն և «Լիկվոր» ՍՊԸ-ն մասնակիցների հայտի ապահովում հավելված 10-ը ներկայացրել

են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18ա և 18բ կետերի՝ վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը պարտադիր է կամ ներկայացվում է վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: Ներկայացված վճարման պահանջագրերում վճարողի ստորագրությունը բացակայում է և ներկայացված չէ վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

1.«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրերում վճարողի ստորագրության բացակայության վերաբերյալ.

Ինչպես արդեն նշվել է, վերոհիշյալ մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Մրցույթի հրավերով հայտի ապահովումը նախատեսված է 10-րդ հավելվածով: Հրավերի վերոհիշյալ հավելվածով մասնակցից պահանջվում է ներկայացնել տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

Սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ներկայացրել է հավելված 10-ը (հայտի ապահովումը)՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ մեկ էլեկտրոնային ֆայլով, և Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությունը առկա է և տեսանելի Հավելված 10-ի առաջին էջի՝ տուժանքի մասին համաձայնագրի ներքևի ձախ անկյունում (Հավելված 10-ը կցվում է): Սակայն, մրցույթի գնահատող հանձնաժողովի կարծիքով էլեկտրոնային թվային ստորագրությունը պետք է դրված լիներ նաև տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրի վրա: Եվ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման պահանջագիրը առանձին հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այս կապակցությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Մեղրու տարածաշրջանային բժշկական կետրոնը ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1, ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 և ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3 ծածկագրերով

մրցույթների շրջանակներում 21.12.2017թ. թիվ 324 գրությամբ (կցվում է) հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է պարզաբանել հետևյալը. «Մրցույթի մասնակից «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի Հավելված 10-ը (հայտի ապահովում) և վճարման պահանջագիրը կազմված է մեկ ֆայլով և դրված է էլեկտրոնային ստորագրություն միայն հավելված 10-ի ներքևի ձախ անկյունում: Վճարման պահանջագրում չկա ոչ կնիք, ոչ ստորագրություն: Խնդրում եմ գրավոր պարզաբանեք՝ հայտը պետք է մերժվի, թե՝ ոչ»:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Թամազյանը հայտնել է հետևյալը. «ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման»:

Պետք է նշել, որ նույն խնդրի վերաբերյալ նույն մոտեցումն է ցուցաբերել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ իր բազմաթիվ որոշումներով:

Գտնում ենք, որ նման պայմաններում, երբ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ներկայացվել են մեկ ֆայլով և տուժանքի մասին համաձայնագրի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա Ընկերության հայտը ենթակա չէր մերժման»:

2. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրերում կնիքի բացակայության վերաբերյալ.

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ՎագաՖարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագրի «18բ» կետում դրված չէ Ընկերության կնիքը, որը ըստ գնահատող հանձնաժողովի՝ պարտադիր պետք է դրվի վճարման պահանջագրի «18բ» կետում, կամ չկնքելու դեպքում ընկերության կողմից պետք է կից ներկայացվեր վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված

համապատասխան պայմանագրի պատճենը: Վճարման պահանջագրում կնիքի բացակայության փաստը դարձել է «ՎագաՖարմ» ՍՊԸ-ի հայտի մերժման երկրորդ հիմքը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն 07.02.2018թ. խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը պարզաբանել, թե արդյոք էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, սակայն չկնքված վճարման պահանջագիրը կարող է հայտերի մերժման հիմք հանդիսանալ, թե՝ ոչ:

Ի պատասխան 07.02.2018թ. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.02.2017թ. ներկայացրել է հետևյալ պարզաբանումը. «Ուսումնասիրելով Ձեր վերոնշյալ գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված հրավերների օրինակելի ձևերով սահմանված է, որ փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու դեպքում կնիքի առկայությունը պարտադիր չէ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, այդ թվում հայտի ապահովումը, հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա կնիքով հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է»:

Վերոշարադրվածից պարզ է դառնում, որ եթե «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն արդեն իսկ «Տուժանքի մասին համաձայնագրի» (հավելված 10-ը հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից վճարման պահանջագրի «18բ» կետը կնիքով չհաստատելու հիմքով հայտը մերժելը՝ հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներին, քանզի միմյանց հետ նույնացվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված (համարժեք է կնքված և ստորագրված փաստաթղթին) և ստորագրված, կնքված սկանավորված փաստաթուղթը:

Կարգի 32-րդ կետի 12-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում

են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Նույնաբովանդակ է նաև հրավերի 8.19-րդ կետը:

Միևնույն ժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագիրը համապատասխանում է «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերով սահմանված պահանջներին և այս պարագայում «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէր մերժման, ուստի «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելիս՝ գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասին ՀՀ օրեսդրության պահանջները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդից խնդրում ենք՝

• Դադարեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշումը՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի մասով:

• Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագիրը գնահատել «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. «<u>Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.02.2018թ. թիվ 901 գրությամբ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 29.01.2018թ. իրականացրել է դեղորքայքի ձեռքբերման «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցում:

Մրցույթի հրավերը կազմված է համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 238-Ա հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևի: Համաձայն հրավերի 8-րդ բաժնի «Հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման» 8.2 կետի բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանոցղ հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում, հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Մրցույթին «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը՝ հավելված 10-ը, ներկայացրել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որտեղ ընկերությունը հայտարարել է, որ որպես հայտի ապահովում Պատվիրատուին է ներկայացնում տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված ընկերության կողմից համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»: Նշված կանոններով վճարման պահանջագրում «շահառուի և վճարողի ստորագրությունները և վավերացումները» պարտադիր են:

Համաձայն հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18ա և 18բ կետերի՝ վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը պարտադիր է կամ ներկայացվում է վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: Ներկայացված վճարման պահանջագրերում վճարողի ստորագրությունը բացակայում է և ներկայացված չէ վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը»:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի: Սակայն «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից մեկ ֆայլով ներկայացրած փաստաթուղթը իր մեջ ներառում է երկու տարբեր փաստաթղթեր, որից մեկը բանկային կարգադրություն է՝ վճարման պահանջագիր, իսկ եկրորդը՝ քաղաքացիաիրավական է՝ տուժանքի մասին համաձայնագիր:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստարկները՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից մերժվել է:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում կայանալիք նիստերի ժամանակացույցի մասին, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցում հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցում ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 29.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը,

Պատվիրատուի 15.02.2018թ. թիվ 901 գրությամբ Խորհրդին ներկայացված գրավոր դիրքորոշումը.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ–ի կարիքների համար կազմակերպվել է «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով դեղորայքի գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 29.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով արձանագրել է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտի ապահովումը (N10 հավելվածը) ներկայացվել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18ա և 18բ կետերի՝ վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը պարտադիր է կամ ներկայացվում է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: Ներկայացված վճարման պահանջագրերում վճարողի ստորագրությունը բացակայում է և ներկայացված չէ վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընկերության հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Բողոքի քննության նպատակով 16.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ: Վերջինս հայտնեց, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը (հավելված 10-ը) ներկայացրել է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով և նշեց, որ Ընկերության հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է տուժանքին կից ներկայացված վճարման պահանջագրում վճարողի ստորագրության բացակայության և վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը ներկայացված չլինելու հիմնավորմամբ: Ընկերության ներկայացուցչի կարծիքով, վերը նշված մերժումն անհիմն է և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումներից: Որպես ասվածի հիմնավորում՝ Ընկերության ներկայացուցիչը վկայակոչեց Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի կողմից կազմակերպված մի շարք ընթացակարգերի շրջանակներում 21.12.2017թ.

թիվ 324 գրությամբ կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով(...):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատվել են գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի

ձևերը: Համաձայն վերը նշված օրինակելի ձևերի՝ բաց մրցույթի հրավերով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագիրը լրացվում է նույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի համաձայն:

«ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագրի՝

• 18.ա կետով սահմանված «վճարողի ստորագրությունը» վավերապայմանի առկայությունը փաստաթղթում պարտադիր է, ընդ որում, նշված վավերապայմանի դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում, վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:

• 18.բ կետով սահմանված «վճարողի կնիքը» վավերապայմանի առկայությունը փաստաթղթում պարտադիր է կնիքի առկայության դեպքում, և ոչ պարտադիր՝ փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի ոչ պաշտոնական պարզաբանումներ կարող են տալ պարզաբանման ենթակա հարաբերությունների կարգավորման բնագավառում աշխատող պաշտոնատար անձինք, փաստաբանները, իրավաբանական ծառայություններ իրականացնող անձինք, համապատասխան բնագավառի այլ մասնագետներ: Նույն մասով նախատեսված պարզաբանումները կրում են խորհրդատվական բնույթ:

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված հարցումներին ի պատասխան լիազորված մարմնի կողմից տրամադրված ոչ պաշտոնական պարզաբանումների համաձայն՝ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում՝

• եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման.

• եթե մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, այդ թվում հայտի ապահովումը, հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա կնիքով հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից տուժանքի մասին համաձայնությունը (հավելված 10) և դրան կից վճարման պահանջագիրը ներկայացվել են մեկ էլեկտրոնային փաստաթղթով (մեկ ֆայլով), ընդ որում տուժանքի մասին համաձայնագրի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հաշվի առնելով, որ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ վճարողի՝ 18.ա կետով սահմանված ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընկերության կողմից տուժանքի մասին համաձայնությունը (հավելված 10) և դրան կից վճարման պահանջագիրը ներկայացված են մեկ էլեկտրոնային փաստաթղթով (ֆայլով), Խորհուրդը գտնում է, որ նշված փաստաթղթերը Ընկերության կողմից վավերացվել և ներկայացվել են Հրավերի պահանջներին համապատասխան:

Խորհուրդը գտնում է նաև, որ վճարման պահանջագրի 18.բ կետով սահմանված «վճարողի կնիքը» վավերապայմանը փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում դառնում է ոչ պարտադիր, հետևաբար, կնիքի բացակայությունը նույնպես չէր կարող Հանձնաժողովի կողմից ընդունվեր որպես Ընկերության հայտը մերժելու հիմք, ուստի Հանձնաժողովը Ընկերության հայտը անբավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշումը՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի մասով:

3.Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագիրը գնահատել «ՎԲԿ ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ